ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԳՈՐԻՍԻ ՄԵԼԻՔԱԿԱՆ ԱՊԱՐԱՆՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

2016թ. «Երկիր և մշակույթ» բարեգործական կազմակերպության նախաձեռնությամբ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը պեղումներ է իրականացրել Հին Գորիս բնակավայրի ամենից աչքի ընկնող շինություններից մեկի՝ մելիքական ապարանքի տարածքում: Այն գտնվում է Սբ. Հռիփսիմե եկեղեցուց մոտ 70 մ դեպի արևելք և առանձնանում է իր դիրքով, չափսերով և լուծումներով:

Հին Գորիսում իրականացրած հնագիտական ուսումնասիրությունները որոշակի լույս են սփռում քարանձավային բնակատեղիների, քարանձավ-կացարանների և կից կառուցված շինությունների ձևերի, հատակագծային լուծումների, կիրառական նշանակության և թվագրման հարցերի վրա:

Բանալի բառեր՝ *Հին Գորիս, քարայրային բնակատեղի, մելիքական ապարանք, պեղումներ, գտածոներ, խեցեղեն:*

Սյունիքը Մեծ Հայքի խոշոր նահանգներից մեկն է, որը պատմական գրեթե բոլոր վճռական դրվագներում ունեցել է իր ակտիվ դերակատարությունը: Լինելով ազգային ազատագրական պայքարի ամենաբոցավառ օջախներից մեկը՝ Սյունյաց աշխարհը շարունակ պահպանել է իր կիսանկախ վիճակը նույնիսկ ամենից փոթորկուն ժամանակաշրջաններում: Չդադարեցնելով պայքարը թշնամու դեմ՝ Սյունիքում վերելքների ու անկումների շղթայական ընթացքով գրեթե չդադարեց նաև մշակութային գործունեությունը: Թե՛ իր ծաղկման շրջաններում և թե՛ երկրի համար օրհասական պահերին այստեղ մեկը մյուսի ետևից ստեղծվել են մշակույթի տարաբնույթ կոթողներ: Այսօր էլ Սյունիքի մարզում ամեն քայլափոխի կարելի է հանդիպել մեգալիթյան հուշարձանների, բերդ-ամրոցների, կամուրջների, հոգևոր, աշխարհիկ, տնտեսական նշանակության բազմապիսի կառույցների:Մելիքական շրջանում պահպանելով կիսանկախ վիճակը՝ հնարավորինս պահպանվել են նաև աշխարհիկ շինություններն ու եկեղեցիները, շարունակ կառուցվել են նորերը, իսկ եթե պայմանները անբարենպաստ են եղել շինարարության համար, սյունեցիները իրենց տները, եկեղեցիները, արհեստանոցները, քարավանատները ուղղակի կերտել են անմատչելի քարայրներում:

Այդպիսով, Սյունիքում ձևավորվել են քարայրային բնակատեղիներ, որոնցից մեկն է Հաբանդ գավառի Ձագեձոր բերդ-ամրոցի շրջակայքում գտնվող բնակատեղին՝ այժմ հայտնիէ Հին Գորիս անվամբ: Հին Գորիսը (Գորիս կամ Կյորես գյուղ) գտնվում է Վարարակն գետի ձախ ափին՝ ժամանակակից Գորիս քաղաքի արևելյան դիմահայաց ժայռի ծերպերին:Երբ 1870-ական թթ. նորաստեղծ Զանգեզուրի գավառում սկսվում են Նոր Գորիսի շինարարական աշխատանքները, իսկ դարավերջին ցարական հրամանով այն ստանում է քաղաքի կարգավիճակ, Գորիս գյուղի բնակչությունը հետզհետե տեղափոխվում է քաղաք:Այդպես գյուղը մնում է որպես ավերակ ու լքյալ բնակավայր, ուր պահպանվել են մի շարք քարայր-բնակարաններ ու սրբատեղիներ: Հետագայում-

Գորիս գյուղը մտնում է քաղաքի կազմի մեջ և վերածվում նրա թաղամասի՝ Հին Գորիս անվամբ:

Ողջ Զանգեզուրում շատ են ժայռերի մեջ փորված բնական կամ արհեստական ամրությունները, որոնք թեև բարձր կառուցողական արվեստով աչքի չեն ընկնում, սակայն թշնամուց պատսպարվելու հիանալի կացարաններ են: Դրանք հնարավորինս անառիկ են, ամուր և թշնամու համար անմատչելի: Քիչ թե շատ նշանավոր յուրաքանչյուր գյուղ ուներ իր՝ վտանգի դեպքում նահանջելու և պատսպարվելու բնակատեղին:Դրանցից մեկն էր նաև Հին Գորիսի «Լաստ» կոչվող խութը[1]: Այստեղ մինչ օրս պահպանվել են նմանատիպ արհեստական քարայրներ, որոնք եղել են թե՛ պատսպարան, թե՛ բնակարան և թե՛ արհեստանոց: Նման քարայրային տներ այստեղ այսօր էլ հաշվվում են 500-ից ավելին[2]: Այս քարայրներից հատկապես ուշադրության են արժանի նրանք, որոնք ծառայել են որպես առանձնարաններ ճգնավորների համար:Սրանք մինչ այժմ ուխտատեղիներ են համարվում: Ժամանակի ընթացքում Գորիս գյուղում ի հայտ են եկել նաև քարաշեն բնակարաններ, որոնց մասին նկարագրություն ունի նաև Հայր Ալիշանը. «Գլխավոր մասն աւանին կայ յահեկէ գետակին, որ է յարեւելից, ունենալով միահամուռ 500 տունս հայոց եւ 50 այլ ազգեաց, շուրջ թատերաձեւ կարգ ըստ կարգէ վերամբարձեալս՝ նորանշան իմն տեսլեամբ. յաջմէ գետակին տարածանին ագարակքն եւ կալոտին»[3]: Իսկ Ստ. Լիսիցյանը Հին Գորիսի հատակագիծը համեմատում է ֆեոդալական Եվրոպայի քաղաքների դասավորության հետ, որը համարում է հասարակական միանման հանգամանքների արդյունք[4]:

Հայտնի է, որ 16-17-րդ դդ. Սյունիքում և Արցախում իրենց ազդեցիկ տեղն են գրավում մելիքական ընտանիքները, որոնք, թուրք-պարսկական տիրապետության շրջանում ձեռք բերելով որոշակի իրավունքներ, վճռական դեր են խաղում տարածաշրջանի ղեկավարման հարցերում: Սյունիքում մելիքությունները դառնում են այն գլխավոր ուժը, որի վրա հենվում են ազգային ազատագրական շարժումները և դրանց ջատագովները, ինչպես օրինակ՝ Իսրայել Օրին կամ Դավիթ Բեկը:Բացի ռազմաքաղաքական գործունեությունից, մելիքները ծավալում են նաև շինարարական աշխատանքներ: Այդ հարցում հատկապես աչքի է ընկնում Հին Գորիսում հաստատված Մելիք Օհան Մելիք-Հուսեինյանը:Այս տոհմի հիմնադրումը կապվում է հին գորիսեցի Խոջա Լազարի որդի Լալայի անվան հետ և դրա նշանավոր ներկայացուցիչների՝ Մելիք Օհանի, Մելիք Հուսեինի և այլոց հերոսական և դրամատիկ կյանքի դրվագներ մեզ են հասել Ե. Լալայանի գրառումների շնորհիվ[5]: Տոհմի վերջին մելիքը Հարությունն էր, որն անպատվություն համարելով տանուտերության ընտրովի կարգը՝հրաժարվում է իր պաշտոնից: Ալիշանը նույնպես հիշատակում է այս մելիքին.«Ժամանակակիցք Հայ գաւառապետին յիշին բնիկք աւանիս Մելիք Յարութիւն Մելիք Հիւսենեան, ի մեծ ազգէ. Այր բարեպաշտ և քաջասիրտ, յաջողակ յամենայն բանս և ի գործս իւր. նմանապէս եղբայր իւր Ալլահվերտի Բէկն»[6]:

Մելիք Օհանը 18-րդ դ.երկրորդ կեսի նշանավոր դեմքերից էր: Ահա թե ինչ-

1 **Լիսիցյան Ս.**, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 39:
2 **Мирзоян Г.**, Весь Сюник, Москва, 2005, стр. 150:
3 **Ալիշան Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 262:
4 **Լիսիցյան Ս.**, նշ. աշխ., էջ 49:
5 **Լալայան Ե.**, Զանգեզուր, Ազգագրական հանդես, դ գիրք, Թիֆլիս, 1898, էջ 8-11:
6 **Ալիշան**, նշ. աշխ., էջ 262:

պես է Ե. Լալայանը ներկայացնում Օհանի մելիքի տիտղոս ստանալու համառոտ պատմությունը. «Այստեղ Յոհանը յայտնի է դառնում իւր քաջութեամբ և ամուսնանում է շօշեցի մի մեծատան աղջկայ հետ: Այս ժամանակ գորիսեցիք գնում խնդրում են Յոհանին, որ գայ իրենց մելիք դառնայ. Սա էլ, երբ նոյն խնդիրը կրկնում են Մելիք Շահնազարին՝ յանձն է առնում և Փանահ խանից Գորիս, Խոտ, Շնհէր, Հալիձոր, Քարահունջ, Ալիղուլիքենդ, Տաշքենդ, Մաղանջուղ և Կորուգիւղերի վրայ մելիք հաստատուելով գալիս է կառավարելու»[1]: Հայտնի գործիչներ Մելիք Շահնազարի և Փանահ խանի անունների հիշատակությունը ավելի է հստակեցնում Մելիք Օհանի ժամանակաշրջանը (1752 թ. Վարանդայի տխրահռչակ Մելիք-Շահնազար Բ-ի թողտվությամբ Արցախում հաստատվեց քոչվոր ջևանշիր սարըջալլու ճյուղի ցեղապետ Փանահ խանը)[2]: Նա իր բնակության վայր ընտրում է Կյորես գյուղը՝ Վարարակնի ձախ ափին: Մելիք Օհանը դեռևս իր մահից վեց տարի առաջ՝ 1765 թ. հասցրած է լինում կանգնեցնել մի եկեղեցի՝ իր հոր և իր իսկ հիշատակին,[3] ինչի մասին թողել է արձանագրություն[4]: Սբ Հռիփսիմե եկեղեցին նույնպես անմիջական կապ ունի Մելիք Օհանի հետ: Վերջին տարիներին եկեղեցու հարավային մուտքի բարավորին բացվել է շինարարական արձանագրություն, որն ունի հետևյալ բովանդակությունը. «ՅԻՇԱՏ(Ա)Կ Է ԵԿԵՂԵՑԻՍ ՊԱՂԸՐԻ ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ՕՀԱՆԻՆ ԹՎ(Ի) Ն ՌՄԻԵ (1776)»:

Եվ ահա այս մելիքական տոհմի և հատկապես նրա նշանավոր ներկայացուցիչ Մելիք Օհանի անվան հետ է կապված Հին Գորիսում մելիքական ապարանքի գոյությունը: Այստեղ կարևոր է Լալայանցի այն վկայությունը, որ մելիք կարգվելուց հետո «Մելիք Յոհանը բնակութիւն է հաստատում նախ «Ծակերի ձորում», բայց յետոյ հիմնարկում է Նոր-Գորիս գիւղը և այնտեղ տեղափոխւում»:[5] Այսօր տասնյակ կիսականգուն կամ մինչև հիմքերը ավերված կառույցների միջից դժվար է վստահորեն պնդել, սակայն ուսումնասիրողների տարեգրությունների վերլուծությամբ և ժողովրդի մեջ պահպանված ավանդույթի ուժով կարելի է ենթադրել, որ Մելիք-Հուսեինյանների ապարանքը Սբ Հռիփսիմե եկեղեցուց ոչ հեռու գտնվող կիսավեր կառույցն է: Գորիս գյուղի շենքերի դիրքը նկարագրելիս Ստ. Լիսիցյանը տեղեկություններ է հաղորդում ապարանքի տեղադրության մասին.«Անմիջապես ժայռի տակ ծվարել է մելիքի տունը, որը իր բազմաթիվ վերակառուցումների միջոցին աշխատել է ոչ մի կերպ չհեռանալ գյուղի վրա իշխող այդ ամուր դիրքից...Նրանից ավելի ներքև, նրա թևի տակ պատսպարվել է եկեղեցին»[6]: Հատկանշական է այն, որ մելիքական ապարանքների համար կարևոր նախապայման է եղել պաշտպանվածությունը: Տվյալ դեպքում Գորիսի մելիքական ապարանքի թիկունքը պաշտպանված է ժայռային բարձունքներով, քարայրներով ու քարատակերով, որոնք հիանալի պատսպարաններ ու թաքստոցներ են[7]: Ե. Լալայանը իր հերթին անդրադառ-

1 **Լալայեան Ե.**, նշ. աշխ., էջ 8-9:

2 **Մաղալյան Ա.**, Արցախի մելիքությունների պատմության մի քանի հարցերի շուրջ, Պատմաբանասիրականհանդես, 2014, № 1, էջ 183

3 **Мирзоян Г.**, стр. 116.

4 **Բարխուդարյան Ս.**, Դիվան Հայ վիմագրության, պրակ II, Երևան, 1960, էջ 80:

5 **Լալայեան Ե.**, նշ. աշխ., էջ 9:

6 **Լիսիցյան**, նշ. աշխ., էջ 49:

7 **Ղուլյան Ա.**, Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Ե., 2001, էջ 117:

նալով եկեղեցուն՝ գրում է. «Գյուղի կենտրոնում գտնվում է հին, հասարակ եկեղեցին, իսկ սրա մոտ Մելիք Հուսեինյանների նախկին ապարանքը, որը այժմ ավեր է»[1]: Մելիքական ապարանքների կառուցման համար կարևոր սկզբունք է եղել նաև եկեղեցիներին և տոհմական գերեզմանոցներին մոտ գտնվելը[2]:

Մաքրման և պեղման աշխատանքները. 2016թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Երկիր և մշակույթ» կազմակերպության նախաձեռնությամբ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (տնօրեն՝ Պ. Ավետիսյան) արշավախումբը (ղեկ.՝ Ա. Նալբանդյան, հնագետ՝ Հ. Բադալյան)իրականացրեց Մելիք-Հուսեինյանների նշանավոր ներկայացուցիչ Մելիք Օհանին վերագրվող ապարանքի պեղումները, որոնք կարևոր էին մի քանի պատճառներով.

1. Հին Գորիսում իրականացրած ծրագրերի շրջանակներում կարևոր էր գտնել ուսումնասիրված և վերականգնված հուշարձանների կապը և ժամանակագրական ընդհանրությունները[3]: Հայտնի է, որ Մելիք Օհանի անունը անմիջականորեն կապված է Սբ Հռիփսիմե եկեղեցու կառուցման հետ: Այդ առումով հետաքրքիր է և գիտության համար կարևոր ուսումնասիրել և պատկերացում կազմել այն ժամանակվա եկեղեցաշեն վերնախավի կենցաղային վիճակի և ապրելակերպին առնչվող որոշ հարցերի մասին:

2. Մելիքական ապարանքի ուսումնասիրությունը կարևոր է առհասարակ աշխարհիկ մշակույթի ուսումնասիրության համար՝ թե՛ ճարտարապետության տեսանկյունից, թե՛ ազգագրության:Նման կառույցների ուսումնասիրությունը դեռևս բավականին լրացումների կարիք ունի, հնագիտական պեղումներ շատ քիչ են կատարվել՝ և՛ կենցաղին, տնտեսավարմանը, և՛ շատ այլ հարցերին վերաբերող խնդիրներ մնացել են բաց:

3. Նախագծման աշխատանքները հնարավոր դարձնելու համար նախ անհրաժեշտ էր պեղումներով մինչև հիմքերը բացել ողջ ապարանքը՝ իր բոլոր կցակառույցներով: Պեղումների շնորհիվ հնարավոր է, որ ի հայտ կգան բազմաթիվ որմնաքարեր ու ճարտարապետական դետալներ, որոնք կնպաստեն կառույցը վերականգնել՝ հնարավորինս անխաթար պահելով դրա պատմական տեսքը:

4. Կառույցի շրջակա մշակութային շերտի և շինարարական հորիզոնների ուսումնասիրության արդյունքում չի բացառվում, որ ի հայտ կգան այնպիսի գտածոներ, որոնք նոր լույս կսփռեն կառույցի անցյալի վրա:

Ապարանքը գտնվում է Սբ Հռիփսիմե եկեղեցուց մոտ 70 մ արևելք, բլրալանջի թեքության վրա: Այն բաղկացած է միահարկ երկու հիմնական կառույցներից, որոնց կից կան այլ պատերի հիմքեր և հողով գրեթե ամբողջությամբ փակված քարայրներ: Ակնհայտ է, որ քարե կառույցները, որոնք ամբողջությամբ շարված են անմշակ գլաքարերով, կառուցվել են նախապես փորված քարայրներին կից: Կառույցներից մեկը երկարավուն սրահ է, որի հարավային ճակատը և կամարակապ թաղը հիմնովին քանդվել են և փլատակներով լցրել ողջ

1 **Լալայան Ե.**, նշ. աշխ., էջ 27:

2 **Ղույյան Ա.**, նշ. աշխ., էջ 117:

3 2010թ. «Երկիր և մշակույթ» կազմակերպության նախաձեռնությամբ պեղվել և վերականգնվել է Սբ Հռիփսիմե եկեղեցին, որի վերաօծման արարողությունը տեղի է ունեցել 2012 թ.-ին: Պեղումներն իրականացրել է ՀՀ մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության կենտրոնի արշավախումբը (արշ. ղեկ. Խ. Վարդանյան, գիտ. խորհրդատու՝ Հ. Սիմոնյան), իսկ վերականգնումը՝ ճարտարապետներ Ս. Նալբանդյանը և Ա. Բաղդիշյանը:

սրահը: Քիչ թե շատ պահպանվել է կառույցի հյուսիսային պատը, որը ծառայում է որպես հենապատ, սակայն ունի խոշոր ճեղքվածքներ և նույնպես փլուզման վտանգի տակ է: Կառույցի արևմտյան պատն ունի 4 որմնախորշ և երկու մուտք, որոնք բացվում են դեպի քարայրները: Արևելյան կառույցը, որ հավանաբար կցվել է նախորդին, ավելի ուշ պահպանվել է լավ վիճակում: Երկու կառույցների կցման հատվածում միջնապատը լայնացված է և մուտք է բացված: Կանգուն սրահի հարավային պատին առկա են 3 ուղղանկյունաձև խոշոր բացվածքներ, որոնցից մեկը նախկինում ծառայել է որպես մուտք, սակայն հարավային կողմից տնտեսական նեղլիկ միջանցքի կցման հետևանքով կորցնելով նշանակությունը՝ փակվել է: Այս բացվածքներից մեկի վերևում գլխիվայր տեղադրված է խաչապատկեր քար: Այս սենյակը հյուսիս-արևելյան կողմում ևս կից է քարայր-սրահի: Սրա մի անկյունում կա շրջանաձև անցք, որը տանում է դեպի գագաթում 4 սալաքարերով շարված երդիկով սրահ: Կառույցների պատերը և հատակը պատված են եղել կրասվաղով: Կառույցից մոտ 3 մ հարավ առկա են ևս մեկ պատի հիմքեր: Սենյակներին կից երկու ընդարձակ քարայրները գրեթե ամբողջությամբ լցված են հողով: Դրանցից մեկի առաստաղը քանդված է ամբողջությամբ: Պահպանված բոլոր պատերի հիմքերը ծածկված էին հողի շերտով: Հին Գորիսի քարայրային կացարանների և դրանց կից կառուցված քարաշեն սենյակների մասին մանրամասն նկարագրություններ են պարունակում Ե. Լալայանի և Ստ. Լիսիցյանի աշխատությունները[1]:

Արևմտյան կառույցում՝ քարայրներից մեկի մուտքի դիմաց, բացվեց աստիճանաշարերով նեղլիկ միջանցք (1,1 մ լայնքով)՝ երկու կողմերում հենապատերով: 5 աստիճաններով շարված միջանցքը ամենից խորը հատվածում ունի 1,5 մ բարձրություն, իսկ մուտքից մինչև միջանցքի ծայրը 4,1 մ է: Այս սրահի երկրորդ շերտի պեղումների ժամանակ բացվեցին մոտ 90-115 սմ տրամագծով և 185-220 սմ խորությամբ տնտեսական հորեր: Դրանք ունեն սալաքարերով ձևավորված ուղղանկյուն բերան (մի քանի դեպքերում սալաքարերը խարխլվել և թափվել էին): Հորերից դուրս եկած կավե, ապակե, երկաթյա, բրոնզե 18-20-րդ դդ. խոտան իրերի բազմաքանակությունը և դրանց վնասված, բեկոտված, քայքայված լինելու հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ սրանք նախատեսված են եղել որպես աղբահորեր: Սրահի տարածքում բացվեց նաև փայտե սյուների համար նախատեսված քարե սկավառակաձև խարիսխ:

Այսպիսով, կարելի ենթադրել, որ այս՝ արևմտյան կառույցը եղել է դեպի քարայրները և դեպի արևելյան կառույցը տանող նախասրահ, որը հավանաբար չի ունեցել հարավային պատ, այլ այս ճակատը ձևավորված է եղել կամարաշարերով: Այն 19-20-րդ դդ. ակնհայտորեն ունեցել է տնտեսական նշանակություն, որտեղ փորվել են խորունկ հորեր, նախ միգուցե որպես մթերքի սառը պահոցներ՝ հետագայում վերածվելով աղբահորերի:

Արևելյան կառույցում և դրան կից քարայր-սենյակում (7.0x3.4 մ և 2.9x3.5 մ) միջինը 40 սմ պեղելով՝ բացվեց սրահի կրապատ հատակը: Սրահի արևելյան պատին կցվել է 67 սմ լայնությամբ և 14 սմ բարձրությամբ հիմնահարթակ: Կարելի է ենթադրել, որ սա եղել է նախնական և գլխավոր կառույցը, և մնացած հատվածները կառուցվել են սրան կից՝ ելնելով տարբեր պահանջներից հետզհետե ընդարձակելով այն:

1 **Լալայեան Ե.**, էջ 59-60, **Ստ. Լիսիցյան**, էջ 96-97:

Ուշագրավ արդյունքներ տվեցին քարայրներում կատարված աշխատանքները: Դրանցից մեկում լցված հողի բարձրությունը հասնում էր 90 սմ-ի: Քարայրն ունի 7.9x5.6 մ չափսերով ընդարձակ սրահ: Սրա կեսից ավելին լցված էր հողով, որը գոյացել է առաստաղի քայքայման հետևանքով: Հասնելով հատակին՝ ի հայտ եկան 19-20-րդ դդ. արհեստագործական գործիքներ, որոնց բազմաքանակությունը վկայում է քարայրի նախ որպես արհեստանոց, ապա 20-րդ դ. որպես գոմ օգտագործելու մասին (գտնվեցին մեծ թվով պայտեր): Բացի դրանցից, մեծ թիվ էին կազմում փամփուշտների պարկուճները: Ակնհայտ է, որ հարմար դիրք և նպաստավոր տեսադաշտ ունեցող այս քարայրը ժամանակին ծառայել է որպես պաշտպանական հենակետ (քարայրի մուտքի հարևանությամբ բացվել է ևս մի անցք, որի տակ հենապատ է շարվել): Այս առումով հատկանշական է, որ մելիքական ապարանքները հանդիսացել են նաև ինքնատիպ զորակայան-հենակետեր[1]: Քարայրի հատակը կրով հարթեցված է: Դրա գրեթե կենտրոնում բացվեց հիմնաժայռի մեջ փորված շրջանաձև խոշոր հոր (տրամ.՝ 1.3 մ): Սրա մեջ 60 սմ խորությունում բացվեց կավե պատերով օջախի շրթնամասը (հաստ.՝ 5 սմ): Օջախի բերանի բացվածքը 77-82 սմ է: Օջախի հարավային պատին միանում է սալերով շարված օդամուղ անցք, իսկ հատակամերձ մասում կա ևս մեկ անցք, որից սկսվում է կավե խողովակաշար և թեքությամբ բարձրանում դեպի սրահի հատակը: Օջախն ունի 50 սմ խորություն (գետնի մակերևույթից հաշված՝ 1,1 մ խորություն): Օդամուղի քարերից մեկը շրջանաձև երկանք է՝ կենտրոնում անցքով: Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ այս օջախը իր պահպանվածության տեսակետից բացառիկ է ուշմիջնադարյան մշակույթի ուսումնասիրության և Գորիսի քարայրային բնակատեղիների բնութագիրը ներկայացնելու առումներով: Այս օջախների օգտագործման մասին վկայություններ են հաղորդում Ե. Լալայանը և Ստ. Լիսիցյանը: Քարայրի զանազան հատվածներում հայտնաբերվել են այրված նյութի բազմաթիվ զանգվածներ, որոնցից մի քանիսի վրա նկատելի են մոմի շերտեր: Այստեղից կարող ենք առաջ քաշել երկու վարկած: Առաջին՝ հնարավոր է, որ քարայրում տարվել են թրծման աշխատանքներ և այրված թափոնները թաղվել են տարածքում: Սակայն ավելի հավանական է, որ ժամանակին քարայրը ծառայել է Սբ Հռիփսիմե եկեղեցու կարիքներին, և այստեղ են թաղվել մոմի և խունկի այրված մնացորդները: Քարայրից հայտնաբերվեցին նաև կավե հաստ սալիկների սակավաթիվ բեկորներ, որոնք նույնպես հավանական է օջախների կամ թոնիրների պատերի մնացորդներ են: Այս քարայրում բացվեցին ևս երեք ուղղանկյունաձև, ոչ խորունկ փոսեր: Քարայրի մաքրման և պեղման աշխատանքների արդյունքում բացվեց 5.6x7.9 մ չափսերով սրահ, որի կենտրոնում՝ վերը նկարագրված օջախը: Մյուս քարայրում, ի տարբերություն նախորդի, առաստաղը քանդված է ամբողջությամբ, ինչի հետևանքով առաջացել է շրջանաձև խոշոր բացվածք: Հողաշերտի հաստությունը հասնում է 1.8-2.0 մ բարձրության: Հետաքրքիրն այն է, որ այս քարայրի հողահեռացման աշխատանքների ժամանակ ի հայտ եկան 12-13-րդ դդ. կարմիր մակերեսով անոթների բեկորներ: Աշխատանքների արդյունքում բացվեց 10.2x7.4 մ չափսերով ընդարձակ սրահ՝ կից տարբեր չափսերի քարայր-սենյակներով:

1 **Ղուլյան Ա.**, նշ. աշխ., էջ 116

Գտածոները: Գտածոների մեջ գերակշռում է հասարակ խեցեղենը, հազվադեպ՝ ջնարակված: Դրանք դարչնագույն մակերեսով հաստ պատերով կճուճների բեկորներ են՝ հատակի, իրանի, կանթի հատվածներ: Կանթերը հիմնականում լայն են՝ ակոսագծերի շարքերով: Կան նաև փոքր աղեղնաձև կանթեր: Հատուկենտ են կղմիդրի բեկորները:Մեծ թիվ են կազմում նաև հախճապակե պնակների բեկորները, որոնցից մի քանիսի վրա առկա է ցարական զինանշան: Խեցեղենը գլխավորապես ուշմիջնադարյան կենցաղային անոթների բեկորներ են: Առանձնանում են ճրագամանները, որոնց ծորակի հատվածները պատված են այրված ձեթի հետքերով: Սրանք նավակաձև սրացող նեղլիկ ճրագամաններ են, որոնց բերանի բացվածքը, մի եզրում փողրակաձև ոլորվելով, վերածվում է քթիկանման ծորակի: Այսպիսի ճրագներ գտնվեցին նաև հորերի միջից: Դրանք ունեն միայն մեկ պատրույգի համար նախատեսված ծորակ կամ քթիկ: Զանգեզուրում այսպիսի ճրագամաններում այրել են կա՛մ ձեթ (ձիթաճրագ), կա՛մ նավթ (նոթաճրագ)[1]: Նմանատիպ ծորակավոր և քթիկավոր երեք ճրագամաններ գտնվեցին նաև 2010 թ. Սբ Հռիփսիմե եկեղեցու պեղումների ժամանակ[2]: Ճրագամաններ հայտնաբերվել են նաև Սյունքի այլ բնակավայրերում մեր կողմից իրականացված ուշմիջնադարյան շերտերի պեղումների ժամանակ: Դրանցից մեր օրինակներին թե՛ ժամանակագրությամբ, թե՛ ձևով առավել մոտ են Գորիսի ենթատարածքի Տեղ գյուղի Սբ Գևորգ եկեղեցու 2014 թ. պեղումներից հայտնաբերվածները[3]: Բացի ուշմիջնադարյան գտածոներից, հայտնաբերվեցին նաև մի շարք զարգացած միջնադարիվառ կարմիր մակերեսով իրանի, կանթերի խեցաբեկորներ: Ուշագրավ են նաև արմնկաձև կանթը, օղակաձև նստուկով հատակների բեկորները և ջնարակապատ աստառով բեկորները: Հատակներից մեկի վրա առկա է վարպետաց նշան: Զարգացած միջնադարին բնորոշ խեցեղենի այս խումբը հայտնաբերվեց ապարանքին հաղորդակից խոշոր քարայրի առաստաղի փլուզման հետևանքով գոյացած մոտ 2 մետրանոց լիցքի միջից:

Մետաղական իրերից է երկաթե ձողը, որն ավարտվում է օղակով (երկ. 15.5 սմ): Օղակին ամրացված է երկաթե կեռիկ (երկ. 13.5 սմ): Այսպիսի ձող կա սրահի առաստաղին, որին հավանաբար պարան է կապված եղել:Մեկ այլ երկաթե ձող գագաթում ճյուղավորված է երկու ոլորուն վերջույթներով (երկ. 19 սմ): Հատկապես ուշագրավ է երկաթե բանալին (երկ. 7 սմ), լեզվակի մասում՝ քայքայված: Ընդհանրապես մետաղական գտածոները 19-20-րդ դդ. ազգագրական արժեք ներկայացնող իրեր են, որոնց մեջ ընդգրկված են բիզ, քորոց, բռնակով կափարիչ, դռան փական, անվախաղի ձող, բրոնզե կախազարդ:

Քարայրներից հայտնաբերվեցին արհեստագործական գործիքներ՝ մուրճ, կացին, շրթնակ, գամեր, գութանի մասեր, մկրատ, շամփուր, պայտեր և այլն: Ուշագրավ է 3,7 սմ տրամագծով թիթեղյա ճրագը՝ կենտրոնում միջանցիկ անցքով: Նմանատիպ ճրագ գտնվել է նաև Տողի մելիքական ապարանքի պեղումներից:[4] Հատկապես կարելի է առանձնացնել բրոնզե ճարմանդը, որն ամբող-

1 **Լիսիցյան Ստ.**, նշ. աշխ., էջ 171:

2 ՀՀ Սյունիքի մարզի Հին Գորիսի Սբ Հռիփսիմե եկեղեցու 2010 թ. հաշվետվություն (արշ. ղեկավար Խ. Վարդանյան, գիտ. խորհրդատու՝ Հ. Սիմոնյան):

3 ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղի Սբ Գևորգ եկեղեցու 2014 թ. պեղումների հաշվետվություն (արշ. ղեկավար՝ Ա. Նալբանդյան, գիտ. խորհրդատու՝ Հ. Սիմոնյան):

4 **Ժամկոչյան Ա., Բաբայան Ֆ.**, Տողի Մելիք Եգանի ապարանքի պեղումների հիմնական

ջությամբ պատված է ծաղկանախշերով: Հակառակ երեսի երկու ձողերը ենթադրել են տալիս, որ ամրացված կարող էր լինել կտորի կամ կաշվի վրա[1]:

Մեծ թվով գտածոներ հայտնաբերվեցին հորերից: Բացի կավե, ապակե, մետաղե բազմաթիվ գտածոներից,գտնվեցին նաև երկաթե արկի բեկոր, լամպ և այլն: Հատկապես հետաքրքիր է բրոնզե խողովակաձև ձողը (երկ. 18 սմ), որի մի ծայրը փակ է, իսկ մակերեսին կա 3 անցք: Հայտնաբերվեցին երկաթից գործիքներ, փամփուշտներ, բանալի և այլն, ինչպես նաև 1874թ. և 1916թ. ցարական մետաղադրամներ, որոնք օգտագործվել են որպես շքանշան կամ զարդ: Առանձնանում է մատնոցը, որի մակերեսը պատված է գեղեցիկ զարդագոտիներով:Ուշագրավ է նաև լավ պահպանված պղնձե գդալը: Սրա բռնակի մի հատվածում առկա է FRAGET (Ֆրաժե) գրությունը: Այն լեհական Ֆրաժե ընկերության արտադրանք է, որը հիմնվել 1824 թ. և իր անունը ստացել է հիմնադիր ֆրանսիացի երկու եղբոր ազգանունից: 1841 թ. եղբայրներից մեկը դառնում է ընկերության միանձնյա ղեկավար (Josef Fraget, 1797-1867), որը Վարշավայում առաջին գալվանացման լաբորատորիայի հիմնադիրներից է: Այս ընկերությունը առաջիններից մեկն էր, որ յուրացրեց խոհանոցային սպասքի՝ գալվանացման մեթոդով հասարակ մետաղը ազնիվ մետաղով պատելու տեխնիկան: Այդ ընկերության խանութներ ու պահեստներ բացվել են Ռուսական կայսրության տարբեր խոշոր քաղաքներում: Մեծ տարածում է գտնում 19-րդ դարի վերջից մինչև 1910-ական թթ.: 1939 թ. ընկերությունը դադարեցնում է իր գործունեությունը[2]: Արծաթապատված և եվրոպական կնքադրոշմով գդալ հայտնաբերվել է նաև Տողի մելիքական ապարանքի պեղումներից: Մեկ այլ հորի կավե գտածոներից ուշագրավ են ձիթաճրագի քթիկի բեկորը և շրջանաձև սալիկ (մեր կարծիքով օգտագործվել է որպես գրելու համար նախատեսված միջոց): Առանձնանում է նաև դաշույնը, որն ամբողջությամբ կոռոզացված է: Քարե գտածոների մեջ կան քիվի բեկորներ, աղորիքներ, երկանքներ և մեկ գնդաձև կշռաքար: Դրանց միջից առանձնանում են անվաձև, կիսով չափ պահպանված, մեջտեղում անցքով երկանքը(ունի 25.5 սմ տրամագիծ, 9 սմ հաստություն), 1.28 մ երկարությամբ և 25 սմ լայնքով քարը, որի նիստերից մեկը ունի հարթ մշակում, իսկ մի եզրին՝ շրջանաձև անցք (սա հավանաբար երկու սրահներն իրար միացնող մուտքի ճակատակալ քարն է եղել), սանդի բեկորը (լայնքը՝ 9 սմ, երկ.՝ 18 սմ, հաստ.՝ 7 սմ), տանիքի եզրաքիվի բեկորը (23.5x20.5 սմ), որի հարթ մշակված նիստի եզրում առկա է 3 սմ բարձրությամբ ելուստ: Ամենաուշագրավ քարե գտածոն քարայրներից մեկից հայտնաբերված նախշաքանդակ բազալտն է՝ 25x20 սմ չափսերով: Սրա նիստերից մեկին առկա է զույգ լարերով միահյուսված զարդագոտի, իսկ անկյունը ունի բոլորակաձև մշակում: Այն բնորոշ է զարգացած միջնադարյան եկեղեցական մշակույթին և ըստ երևույթին՝ ավելի հին կառույցի շքամուտքի քար է (նմանատիպ քար կար գորիսեցի նկարիչ Ժ. Մարտիրոսյանի հավաքածուի մեջ, որը նշեց, որ այն նույնպես գտնվել է ապարանքի մերձակայքից):

արդյունքները, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2011-2012 թթ., Ստեփանակերտ, 2015, էջ 162:

1 **Լիսիցյան Ստ.**, նշ. աշխ, էջ 122:

2 Historymania.info, Kubar.ru:





Հին Գորիսի Սբ Հռիփսիմե եկեղեցին և մելիքական ապարանքը՝ 20-րդ դարասկզբին (լուսանկարը՝ Գուրոսի) և մեր օրերում (լուսանկարը՝ Ս. Նալբանդյանի)

Տեսարաններ ապարանքի արևտյան ու արևելյան կառույցների տարբեր հատվածներից

Տեսարաններ ապարանքին կից քարայրներից, նորահայտ օջախը և աստիճանները

Պեղումներից գտնված արժեքավոր քարեր



Պեղումներից հայտնաբերված զանազան առարկաներ
(Գրչանկարները՝ Ա. Սահակյանի)



Ճրագամաններ (գրչանկարները՝ Ա. Սահակյանի)

Պեղումներից հայտնաբերված զանազան առարկաներ

Պեղումներից հայտնաբերված ճրագամաններ

Հին Գորիսում գտնվող ապարանքի պեղումները տվեցին նշանակալից արդյունքներ: Դրանց շնորհիվ ի ցույց դրվեց ուշմիջնադարյան կառույցի ընդհանուր պատկերը՝ իր զանազան տնտեսական ենթաբաժիններով: Պեղումները ցույց տվեցին, որ այն, որպես մելիքական ապարանք, գործել է բավական կարճ ժամանակահատված: Հայտնի է, որ Մելիք կարգվելուն պես Հին Գորիսում իր բնակությունը հաստատել է Մելիք Օհանը՝ 18-րդ դարի Գորիսի ամենից սիրված գործիչներից մեկը, որը հայտնի էր ոչ միայն իր հաղթական մարտերով, այլև շինարարական գործունեությամբ: Հին Գորիսի քարայրային բնակատեղիում նա ժամանակավորապես հաստատվել է կացարան-ապարանքում, որի մոտ հետագայում նրա հիշատակին կառուցվել է Հին Գորիսի Սբ Հռիփսիմե եկեղեցին: Ապարանքը պետք է կառուցված լինի 18-րդ դ. երրորդ քառորդում և որպես մելիքների կացարան՝ շատ կարճ է իր գոյությունը պահպանել, քանի որ Մելիք Օհանը շատ շուտով տեղափոխվել է Նոր Գորիս: Հավանաբար ժամանակավոր լինելու հանգամանքն է, որ այն չունի մելիքներին վայել բնակարանի կառուցվածք.բավականին պարզունակ է, միահարկ, շարված կոպտատաշ քարերով՝ զուրկ հարդարանքի տարրերից: Կարճատև գոյությունից հետո ապարանքը հավանաբար մի որոշ ժամանակ էլ օգտագործվել է որպես շարքային կացարան, այնուհետև վերածվել արհեստանոցի: Այդ վերաօգտագործումների ժամանակ կառույցը կրել է որոշակի փոփոխություններ, և կատարվել են հավելումներ՝ մանավորապես արևելյան սենյակից հարավ: Դրանք հիմնականում տնտեսական նշանակություն են ունեցել, որոնցում առկա են զանազան թոնիրներ, հորեր: Աշխատանքների ընթացքում բացվեցին ոչ միայն քարաշեն կառույցի զանազան հատվածները, հիմքերի մնացորդները, այլև դրան կից քարայրների ընդարձակ սրահները, որոնք, առաստաղների փլուզման հետևանքով գրեթե ամբողջությամբ փակվել էին: Պեղումների ընթացքում հայտնաբերվեցին տնտեսական նշանակության մի շարք հորեր, օջախներ և հիմնականում 18-20-րդ դդ. ազգագրական և հնագիտական նյութեր՝ կենցաղային խեցեղեն, մետաղական իրեր, քարե գործիքներ և այլն: Սակայն հատկանշական է, որ ապարանքի որոշ հատվածներում ի հայտ եկան զարգացած միջնադարին բնորոշ վառ կարմիր մակերեսով խեցեղենի բեկորներ և կանթեր, ինչը վկայում է այն մասին, որ քարայրները բնակեցված են եղել շատ ավելի վաղ, քան ենթադրվում է: Պեղումներից գտնված առարկաները նույնպես թույլ են տալիս ապարանքի և նրան հաղորդակից քարայրների ակտիվ գործունեության ժամանակաշրջան համարել 18-րդ դարի երկրորդ կեսը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893:
2. Բարխուդարյան Ս., Դիվան Հայ վիմագրության, պրակ II, Երևան, 1960:
3. Ժամկոչյան Ա., Բաբայան Ֆ., Տողի Մելիք Եգանի ապարանքի պեղումների հիմնական արդյունքները, *Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2011-2012 թթ.*, Ստեփանակերտ, 2015:
4. Լալայան Ե., Զանգեզուր, *Ազգագրական հանդես*, դ գիրք, Թիֆլիս, 1898:

5. Լիսիցյան Ստ., Զանգեզուրի հայերը, Երևան, 1969:
6. Մաղալյան Ա., Արցախի մելիքությունների պատմության մի քանի հարցերի շուրջ, *Պատմա-բանասիրական հանդես*, 2014, № 1:
7. Ղույյան Ա., Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001:
8. Мирзоян Г., Весь Сюник, Москва, 2005:

ARMAN NALBANDYAN - THE EXCAVATIONS OF THE PRINCE PRINCE PALACE OF OLD GORIS - The excavations of the residence/palace/ in Old Goris provided significant results. Due to these excavations the image of the medieval building with its various economic subsections has been revealed. They also illustrated that the building functioned as a residence of a Melik only for a short period of time. It is known that just after being named a Melik one of the most famous figures in the 18th century, Melik Ohan, famous not only for his victorious battles but also for construction activities, settled down in Old Goris. He settled temporarily in a residence/palace/ in the cave settlements near to which later St Hripsime church was build in his honor. The residence was probably constructed during the second quarter of the 18th century and served as a Melik´s residence only for a short period of time because very soon Melik Ohan moved to New Goris.

Probably because the residence was temporary it doesn´t have a structuretypical to Melik´s residences. It is very simple, has only one floor, is laid with coarse stones without any decorative elements. After a short useage the residence probably was turned into an ordinary habitation and afterwards into a workshop. During these changes of usage the building facedsome changes and addition; in particular, it was expanded to the south from the eastern hall. They mainly had economic usage, where there werevarious tonirs and holes.

In the course of the excavations different parts of the building, ruins of the basements as well as the extensive halls near the caves which were blocked because of the fall of the ceiling. During the excavations a number of halls used for household purposes, fireplaces and mainly 18th century ethnographic and archaeological materials like household potteries, metal objects, stone tools were found. But it is noteworthy, that in some parts of the residence pieces and handles of very red potteries, typical for developed middle ages, were found indicating that the caves were inhabited even earlier than it had been assumed. The objects found during the excavations also give us possibility to believe that thesecond half of the 18th century was the active period of inhabitation for the residence and nearby caves.

Keywords: Old Goris, cave dwellings, melik´spalace, excavations, artifacts, ceramics.

АРМАН НАЛБАНДЯН - РАСКОПКИ РЕЗИДЕНЦИИ В СТАРОМ ГОРИСЕ - Раскопки резиденции в Старом Горисе дали значительные результаты. Благодаря этим раскопкам была показана общая картина позднего средневекового строения с ее различными хозяйственными подразделениями. Раскопки показали, что выше указанное строение, как меликская резиденция, имела недолгую жизнь. Известно, что в Старом Горисе Мелик Оган обосновался в 18-ом веке и был одним из самым любимых деятелей того периода. Он был известен не только своими победами, а также достижениями в строительстве. Сначала он временно обосновался в пещерном

жилище в Старом Горисе, рядом с которым впоследствие был построен Монастырь Св. Рипсиме в честь него. Резиденция была построена во второй четверти 18-ого века и как меликская резиденция имела короткую жизнь, так как Мелик Оган вскоре переехал жить в Новый Горис.

Вероятностью непродолжительной жизни резиденции также является тот факт, что резиденция по своей структуре была довольно примитивна – одноэтажное, построенное из грубый неотесанных камней и без декоративных элементов. После недолгой деятельности резиденция использовалось как обычное жилище, а затем стала мастерской. В течение переиспользований строение подтверглось изменениям и были построены пристройки - в частности к югу от от восточной комнаты. Эти пристройки имели хозайственное значение, где имеются различные тониры (печи) и ямы.

В течение раскопок были найдены не только различные каменные фрагменты и остатки фундамента, а также пристройки пещерных просторных залов, которые вследствие разрушения потолков почти полностью были закрыты. В течение раскопок были найдены несколько ям хозяйственного значения, очаги, а также этнографические и археологические материалы датируемые 18-20-ми веками - бытовая керамика, металлические изделия, каменные орудия и др. Примечательно то, что в некоторых частях резеденции были найдены керамические обломки и ручки с красной поверхностью, датируемые развитым средневековьем. Это свидетельствует о том, что пещерное жилище было заселено еще до 18-го века. Найденные предметы в результате раскопок свидетельствуют о том, что резиденция и его пристройки активно вели деятельность во второй половине 18-го века.

Ключевые слова: Старый Горис, пещерные жилища, дворец меликов, раскопки, артефакты, керамика.